ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Զրահովիտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Զրահովիտ, 093 26 68 56 / 093 55 03 25 / , jrahovit.ararat@mta.gov.am
arm.jrahovit@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 34

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով՝ ավագանին

ՈՐՈՇՈՒՄԷ՝

ՀԱՍՏԱՏԵԼ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. ԶՐԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ԶՐԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ , Մ. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

3.ՀԱՄԱՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՓՐԵՅԱՆ ԼԱԼԱ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔԵՐՈԲ
4. ՄՆԵՅԱՆ ԲՈՐԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՄԼԵՏ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Զրահովիտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Զրահովիտ, 093 26 68 56 / 093 55 03 25 / jrahovit.ararat@mta.gov.am arm.jrahovit@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 35- Ն

ԶՐԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների և « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18 -րդ կետի դրույթներով՝ ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

2018 թվականի համար Զրահովիտ համայնքում սահմանել տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը:

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլատրության համար տեղական տուրքը սահմանվում է՝ հիմնական օբյեկտների համար

ա/ Մինչև 300 ք/մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում

այգեգործական (ամառանոցային) տների ինչպես նաև մինչև 200 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7 500 դրամ

բ/ Սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բ.ա./ 201-ից մինչև 500 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15 000 դրամ

բ.բ./ 501-ից մինչև 1000 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 20 000 դրամ

բ.գ./ 1001-3000ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25 000 դրամ
բ.դ./3001ք/մ ևավելիընդհանուրմակերես ունեցողօբյեկտների համար 35 000դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

գ/ Մինչև 20 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1 500 դրամ:

դ/ 20 և ավելի ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2 500 դրամ

2 . Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով ճարտարապետաշինարարական նախագծով՝ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում, կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2 500 դրամ:

4, Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից եւ ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500 դրամ,

բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ,

գ. 51-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ,

դ. 101-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

ե. 201-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,

զ. 501 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ:

2) 4-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500 դրամ,

բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ,

գ. 51-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ,

դ. 101-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

ե. 201-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,

զ. 501 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ:ե.

5. Համայնքի տարածքում

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 200 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կենտերում հեղուկ վառելիք և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 200 000 դրամ.

գ/ խանութներում , կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000 դրամ:

,գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման եւ իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,

բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

գ. 51-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ,

դ. 101-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար ՝ 5000 դրամ,

ե. 201-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար ՝ 10000 դրամ,

զ. 501 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 դրամ՝

բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,

գ. 51-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

դ. 101-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար ՝ 3000 դրամ,

ե. 201-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար ՝ 4000 դրամ,

զ. 501 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար ՝ 5000 դրամ:

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին) և խաղատներին, ժամը 24-00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է

ա/ առևտրի օբեկտների համար 25 000 դրամ:

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 0000 դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա/ այլ արտաքին գովազդի համար 1 000 դրամ:

բ/ դատարկ գովազդային վահանակների համար 250 դրամ:

գ/ սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը սահմանվում է 1000 դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 10 000 դրամ:

10. Համայնքի տարածքում

ա/ Համայնքի տարածքում շինարարության ավարտական ակտի ձեւակերպման համար, ինչպես նաեւ շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարները սահմանել 5000 դրամ:

բ/ Աճուրդ-մրցույթի մասնակցության վճարը սահմանվում է 2 000 դրամ:

գ/ Մանկապարտեզի ծնողական վարձավճարի գումարի չափը սահմանել մեկ երեխայի համար՝ 5000 դրամ:

Նույն ընտանիքից մանկապարտեզ հաճախող 2 երեխաներից մեկի համար տրամադրել ծնողական վարձավճարի գումարի արտոնություն՝ 50 % - ի չափով:

11. ա/ Համայնքում գործող իրավաբանական անձանց աղբահանության վճարը յուրաքանչյուր ամսվա համար յուրաքանչյուր 1ք/մ-ի համար սահմանել

ա/ա Առևտրի / այդ թվում շուկաների / հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ

50 դրամ

ա/բ Հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ 20 դրամ

ա/գ Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ 5 դրամ

ա/դ Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ 3 դրամ:

բ/ Համայնքի յուրաքանչյուր բնակչից աղբահանության վճարը յուրաքանչյուր ամսվա համար սահմանել

150 դրամ:

12. Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառվել է 0,5 գործակիցը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՓՐԵՅԱՆ ԼԱԼԱ

2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔԵՐՈԲ

4. ՄՆԵՅԱՆ ԲՈՐԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՄԼԵՏ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Զրահովիտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Զրահովիտ, 093 26 68 56 / 093 55 03 25 / jrahovit.ararat@mta.gov.am arm.jrahovit@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 36-Ն

ԶՐԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ , Մ. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11 – րդ և 28 -րդ կետերի դրույթներով՝ ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Զրահովիտ համայնքի ղեկավարի աշխատավարձի ,գյուղապետարանի աշխատակիցների , Մ. մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

Թվաքանակը-10

ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/
Համայնքի ղեկավար		205 000
Համայնքային ծառայության պաշտոններ		
Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար/1.2-1/	1	166 000
Գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1	165 000
Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	120 000
Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-2/	1	120 000
Քաղաքացիական աշխատանք		
Գրադարանավար	1	85 000
Տեխսպասարկման անձնակազմ		
Օպերատոր	1	85 000
Հավաքարար	1	85000
Պահակ	1	83 000
Վարորդ	1	83 000

Թվաքանակը-12

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ դրամ/
Մանկապարտեզի տնօրեն	1	136 000
Մանկապարտեզի դաստիարակ	2	134 000
Մանկապարտեզի դաստիարակի օգնական (դայակ)	2	80 000
Մանկապարտեզի խոհարար	1	80 000
Մանկապարտեզի խոհարարի օգնական	1	80 000
Երաժշտական դաստիարակ	1	80 000
Հաշվապահ	1	80 000
Պահակ	2	80 000
Լվացարար	1	80 000

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՓՐԵՅԱՆ ԼԱԼԱ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔԵՐՈԲ
4. ՄՆԵՅԱՆ ԲՈՐԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՄԼԵՏ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Զրահովիտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Զրահովիտ, 093 26 68 56 / 093 55 03 25 / , jrahovit.ararat@mta.gov.am
arm.jrahovit@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 37-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով՝ ավագանին

ՈՐՈՇՈՒՄԷ՝

Համայնքի 2017 թվականի բյուջեում կատարել փոփոխություն

Եկամտային մաս.

Համայնքային ենթակայության մանկապարտեզի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարները պակասեցնել 13.0 հազար դրամով

Ծախսային մաս.

09.1.1-ի գործառնական դասակարգման Նախադպրոցական կրթության, տնտեսագիտական դասակարգման Ընթացիկ դրամաշնորհներ ՀՈԱԿ-ների 4637 հոդվածից պակասեցնել 13.0 հազար դրամ:

Ծախսային մաս.

ա/01.1.1-ի գործառնական դասակարգման Օրենսդիր և գործադիր մարմինների, տնտեսագիտական դասակարգման Աշխատավարձի 4111 հոդվածից պակասեցնել 100.0 հազ.դրամով

01.1.1-ի գործառնական դասակարգման Օրենսդիր և գործադիր մարմինների, տնտեսագիտական դասակարգման Տեղեկատվական ծառայությունների 4234 հոդվածից պակասեցնել 30.0 հազ.դրամով

բ/01.6.1 գործառնական դասակարգման Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների, տնտեսագիտական դասակարգման Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպությունների 4819 հոդվածից պակասեցնել 40.0 հազ.դրամով

գ/08.2.1-ի գործառնական դասակարգման Գրադարանային ծառայությունների, տնտեսագիտական դասակարգման Աշխատավարձի 4111 հոդվածից պակասեցնել 70.0 հազ.դրամով

դ/05.1.1-ի գործառնական դասակարգման Աղբահանության, տնտեսագիտական դասակարգման Կոմունալ ծառայությունների 4213 հոդվածից պակասեցնել 100.0հազար դրամով

և այդ գումարներն ուղղել՝ 01.1.1-ի գործառնական դասակարգման Օրենսդիր և գործադիր մարմինների, տնտեսագիտական դասակարգման Պարգևատրումների 4112 հոդվածին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՓՐԵՅԱՆ ԼԱԼԱ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔԵՐՈԲ
4. ՄՆԵՅԱՆ ԲՈՐԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՄԼԵՏ ՂԱԶԱՐՅԱՆ